ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-862-11.06.2024-ՏՀ-011

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» 2023 թվականի հունվարի 17-ի ՀՕ-20-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական, քարտեզագրական, մարկշեյդերական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները: Հայաստանի Հանրապետությունում բոլոր գեոդեզիական, քարտեզագրական, մարկշեյդերական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման աշխատանքներն իրականացվում են սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

2. Սույն օրենքի կարգավորման ոլորտն ընդգրկում է գեոդեզիական, քարտեզագրական, մարկշեյդերական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման գործունեությունը, գեոդեզիական, քարտեզագրական, մարկշեյդերական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման բնագավառում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման

մարմինների և այլ սուբյեկտների իրավասությունները, միջազգային համագործակցության, ինչպես նաև վեճերի լուծման կարգը և պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին և 1.2-րդ կետերով.

«1.1) ինժեներական գեոդեզիա՝ շենքերի և շինությունների հետազոտությունների, նախագծման, կառուցման և շահագործման ընթացքում կատարված գեոդեզիական աշխատանքների ընթացքում ծագող գործունեության տեսակ.

1.2) մարկշեյդերական գործունեություն՝ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացում.»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով.

«15) որակավորում ունեցող անձ՝ Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ զբաղվող, Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից որակավորման վկայական ստացած անձ.

16) գեոդեզիական և մարկշեյդերական գործունեություն իրականացնող անձ՝ որակավորում ունեցող անձը, որը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է իրականացնել ցանկացած տեսակի գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման աշխատանքներ, այդ թվում՝ «Քաղաքաշինության մասին» օրենքով լիցենզավորման ենթակա քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցման ենթատեսակ հանդիսացող ինժեներական գեոդեզիայի աշխատանքներ.

17) քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեություն իրականացնող անձ՝ որակավորում ունեցող անձ, որը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է իրականացնել քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական, հաշվառման, ինչպես նաև իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ հողամասերի հատակագծերի կազմման նպատակով՝ գեոդեզիական աշխատանքներ:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում «Կադաստրի կոմիտեն է (այսուհետ՝ Կոմիտե)» բառերը փոխարինել «Կոմիտեն է» բառերով:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16.1-16.6-րդ հոդվածներով.

«Հոդված 16.1.Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեության իրականացումը

1. Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ կարող են զբաղվել Կոմիտեի կողմից որակավորման վկայական (այսուհետ՝ Վկայական) ստացած անձինք:

2. Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները սահմանում է Կառավարությունը:

3. Սույն հոդվածում նշված աշխատանքների որակի և տվյալների հավաստիության համար պատասխանատվություն են կրում բացառապես որակավորում ունեցող անձինք:

4. Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքներն իրականացվում են անշարժ գույքի սեփականատիրոջ (օգտագործողի) միջոցների հաշվին:

5. Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության իրականացման, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքների իրականացման որակավորման վկայականները դասակարգվում են երկու խմբի՝

1) գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման վկայական.

2) քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեության որակավորման վկայական:

6. Որակավորումը կազմակերպում և իրականացնում է Կոմիտեն՝ որակավորման քննությունների միջոցով, որոնք ընդունում է Կոմիտեի կողմից Կառավարության սահմանած կարգով ստեղծած որակավորման հանձնաժողովը: Որակավորման հանձնաժողովը կազմված է 7 անդամից՝ Կոմիտեի աշխատակից հանդիսացող նախագահից, քարտուղարից, ինչպես նաև անդամներից, որոնցից երկուսը հանդիսանում են Կոմիտեի աշխատակիցներ, 1-ն ընտրվում է Հայաստանի Հանրապետությունում գործող գիտական հաստատություններից, մնացած 2-ը՝ Կոմիտեի կողմից հաշվառված ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից առաջադրած անդամներից: Որակավորման հանձնաժողովի անդամների թեկնածուների ներակայացման և ընտրության կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

7. Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ զբաղվելու որակավորման անցկացման կարգն ու պայմանները, որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացնելու կարգը, որակավորման քննությունների հարցաշարերի, այդ թվում՝ խնդիրների և

առաջադրանքների կազմման կարգը, որակավորման վկայականի ձևը սահմանում է Կառավարությունը: Որակավորման անցկացման կարգով սահմանվում են որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման կարգը, ժամկետները, քննության ժամանակ առաջադրվող հարցերի, խնդիրների և առաջադրանքնենրի քանակը, քննությունների արդյունքների գնահատման կարգը, քննության անցկացման համար նախատեսված ժամանակը, սարքածրագրային միջոցներից օգտվելու կարգը, որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորների քանակը, քննության արդյունքների բողոքարկման կարգը, ինչպես նաև քննությունը պատշաճ անցկացնելուն ուղղված այլ դրույթներ:

8. Որակավորման քննության հարցաշարերը, այդ թվում՝ խնդիրները և առաջադրանքները, քննությանն առաջադրվող հարցերը նախապատրաստում է որակավորման հանձնաժողովը, որոնք հաստատում է Կոմիտեի ղեկավարը: Քննության հարցաշարերը, առաջադրվող հարցերի քանակը հրապարակվում են Կոմիտեի պաշտոնական կայքում ոչ ուշ, քան քննության անցկացման օրվանից քսան օր առաջ:

9. Քննության դրական արդյունքներով Կոմիտեի ղեկավարը որոշում է կայացնում որակավորման վկայական տրամադրելու վերաբերյալ:

10.Որակավորման վկայականը ուժի մեջ է մտնում այն Կառավարության սահմանած կարգով որակավորված անձին հանձնելու օրվանից և գործում է անժամկետ:

11. Կոմիտեն վկայական ստացած անձանց անվանացանկը, իսկ վերջիններիս կապի միջոցները և աշխատանքի վայրի մասին տեղեկությունները հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ միայն վերջիններիս գրավոր համաձայնության առկայության դեպքում, որը տրվում է Կառավարության սահմանած կարգով որակավորման քննության մասնակցության դիմում ներկայացնելիս:

12. Որակավորման վկայականի կամ դրա կրկնօրինակի կորստի կամ ոչ պիտանի դառնալու, որակավորված անձի անվան կամ ազգանվան փոփոխման դեպքում որակավորված անձը վկայականի կրկնօրինակ կամ վերաձևակերպված վկայական ստանալու դիմում է ներկայացնում Կոմիտե՝ ներկայացնելով պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիր, որը Կոմիտեն տրամադրում է Կառավարության սահմանած կարգով և ձևով՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Որակավորման վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

13. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից իրականացվող քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքների վրա:

Հոդված 16.2. Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության որակավորման վկայականների գործողության կասեցման ու դադարեցման հիմքերը և կարգը

1. Վկայականների գործողության կասեցման հիմքերն են՝

1) Վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ դատական ակտը.

2) Կառավարության սահմանած գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները չկատարելը, եթե դրանց հիմքով կատարվել է պետական գրանցում՝ Կոմիտեի նախաձեռնությամբ Կառավարության սահմանած կարգով: Սույն կետով սահմանված փաստաթղթերի հիմքով պետական գրանցում կատարված չլինելու պարագայում, Կոմիտեն կասեցնում է Վկայականի գործողությունը բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված բողոքի կամ

ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի դիմումի հիման վրա.

3) գեոդեզիստների և մարկշեյդերների, ինչպես նաև քարտեզագրողների, չափագրողների, հաշվառողների և հողաշինարարների ինքնակարգավորվող կազմակերպությանը (այսուհետ՝ ինքնակարգավորվող կազմակերպություն) մեկ ամիս անընդմեջ չանդամակցելը՝ մինչև վերջինիս կողմից ինքնակարգավորվող կազմակերպությանը անդամակցելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը կասեցվում է ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կոմիտեին ներկայացրած կասեցման դիմումի և ինքնակարգավորվող կազմակերպության անդամակցությունը դադարեցված լինելը հավաստող տեղեկանքի հիման վրա.

4) գեոդեզիստների և մարկշեյդերների, ինչպես նաև քարտեզագրողների, չափագրողների, հաշվառողների և հողաշինարարների ինքնակարգավորվող կազմակերպության անդամավճարը 3 ամիս անընդմեջ չվճարելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը համարվում է կասեցված ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կոմիտեին ներկայացրած կասեցման դիմումի և անդամավճարը վճարված չլինելու մասին տեղեկանքի հիման վրա՝ մինչև վճարումներն ամբողջությամբ կատարելը:

5) գեոդեզիստների և մարկշեյդերների, ինչպես նաև քարտեզագրողների, չափագրողների, հաշվառողների և հողաշինարարների ինքնակարգավորվող կազմակերպության սահմանած վերապատրաստման դասընթացների սույն օրենքով սահմանված նվազագույն ժամաքանակի առնվազն 80 տոկոսին չմասնակցելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը կասեցվում է ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կոմիտեին ներկայացրած կասեցման դիմումի և վերապատրաստման դասընթացների սույն օրենքով սահմանված նվազագույն ժամաքանակի առնվազն 80 տոկոսին մասնակցություն

ապահովված չլինելու մասին տեղեկանքի հիման վրա՝ մինչև վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականության ամբողջությամբ կատարումը.

6) պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև հանրային պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում՝ իր լիազորությունների ժամկետով.

7) որակավորված անձի կողմից կազմած իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերում ոչ տեխնիկական բնույթի սխալներ կատարելը: Սույն կետի իմաստով ոչ տեխնիկական բնույթի սխալ է համարվում այն սխալը, որը հանգեցնում է անշարժ գույքի հարկի շեղման: Սույն կետի իմաստով ոչ տեխնիկական բնույթի սխալ կատարելը չի հանգեցնում վկայականի կասեցման, եթե այդ սխալն ուղղվել է սխալ թույլ տված որակավորված անձի նախաձեռնությամբ: Սխալ պարունակող փաստաթղթի հիմքով պետական գրանցում կատարված չլինելու պարագայում Կոմիտեն իր նախաձեռնությամբ կամ այլ անձի, ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի դիմումի հիման վրա կասեցնում է վկայականի գործողությունը.

8) որակավորված անձի կողմից կազմած իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերում երկու կամ ավելի տեխնիկական բնույթի սխալներ կատարելը, եթե սխալ պարունակող փաստաթղթի հիմքով կատարվել է պետական գրանցում: Սույն կետի իմաստով տեխնիկական բնույթի սխալ կատարելը չի հանգեցնում վկայականի կասեցման, եթե այդ սխալն ուղղվել է սխալ թույլ տված որակավորված անձի նախաձեռնությամբ: Սխալ պարունակող փաստաթղթի հիմքով պետական գրանցում կատարված չլինելու, ինչպես նաև այլ նպատակով կազմված հատակագծերում Կառավարության սահմանած հատակագծերի ձևերի, հատակագծերին ներկայացվող պահանջների և հատակագծերի ներկայացման կարգի խախտման պարագայում Կոմիտեն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված բողոքի հիման վրա կասեցնում է վկայականի գործողությունը.

9) սեփական դիմումի հիման վրա.

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 9-րդ կետերի հիմքով վկայականի կասեցումը վկայականի դադարեցման համար հիմք չի հանդիսանում:

3. Վկայականների գործողությունը կասեցնում է Կոմիտեն՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված դեպքերում վկայականների գործողությունը կասեցնում է Կոմիտեն՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով Կառավարության սահմանած կարգով որակավորման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա:

4. Վկայականի գործողությունը կասեցնելու մասին Կոմիտեի ղեկավարի հրամանն այն կայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը) հանձնվում է համապատասխան որակավորված անձին՝ էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով վերջինիս առցանց գրասենյակում տեղադրելու միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն առցանց գրասենյակում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանը ուժի մեջ է մտնում առցանց գրասենյակում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվան հաջորդող օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ առցանց գրասենյակից տեղեկություններ ստանալու համար և Կոմիտեին անհապաղ գրավոր տեղեկացնել անձնական գրասենյակից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն համապատասխան հրամանը փոստային ծառայության միջոցով ուղարկում է որակավորված անձին:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ, 8-րդ կետերով սահմանված հիմքերով վկայականի գործողությունը կասեցվում է մեկ ամիս ժամկետով: Վկայականի

գործողությունը չի կարող կասեցվել, եթե նշված կետերով սահմանված խախտումների կատարման օրվանից անցել է երեք տարուց ավելի:

6. Վկայականի գործողության կասեցման ընթացքում որակավորված անձն իրավունք չունի իրականացնելու գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործունեությունն ուղղված է կասեցման պատճառները վերացնելուն կամ նախքան կասեցումը կատարված և իրավունքի պետական գրանցման նպատակով ներկայացված գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքները ուղղելուն:

7. Վկայականի գործողության դադարեցման հիմքերն են՝

1) վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերում հետագայում հայտնաբերված կեղծ կամ խեղաթյուրված տվյալների առկայությունը.

2) որակավորված անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ դատական ակտը.

3) վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որակավորված անձի դիմումը.

4) վկայականի գործողության կասեցման ժամկետում սույն օրենքի իմաստով որակավորման ենթակա գործունեություն իրականացնելը.

5) մեկ տարվա ընթացքում երկու անգամ վկայականի գործողության կասեցումը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ կետերով սահմանված դեպքերի.

6) որակավորված անձի մահը հավաստող փաստաթուղթը:

8. Վկայականների գործողությունը դադարեցնում է Կոմիտեն՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով: Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով սահմանված դեպքերում վկայականների գործողությունը դադարեցնում է Կոմիտեն՝

Կոմիտեի ղեկավարի հրամանով՝ Կառավարության սահմանած կարգով որակավորման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա:

9. Վկայականի գործողության դադարեցման մասին Կոմիտեի ղեկավարի հրամանն (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը) կայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնվում է համապատասխան որակավորված անձին՝ էլեկտրոնային եղանակով՝ Կառավարության սահմանած կարգով վերջինիս առցանց գրասենյակում տեղադրելու միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն առցանց գրասենյակում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանն ուժի մեջ է մտնում առցանց գրասենյակում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվան հաջորդող օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ առցանց գրասենյակից տեղեկություններ ստանալու համար և Կոմիտեին անհապաղ գրավոր տեղեկացնել անձնական գրասենյակից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն համապատասխան հրամանը փոստային ծառայության միջոցով ուղարկում է որակավորված անձին: Վկայականի գործողության դադարեցման մասին Կոմիտեի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը Կոմիտեի պաշտոնական կայքում իրականացվում է վկայականի գործողության դադարեցման մասին նշում:

10. Վկայականի գործողության դադարեցումից հետո նոր վկայական ստանալու համար անձը Կառավարության սահմանած կարգով կարող է դիմել ոչ շուտ, քան դրա գործողության դադարեցման օրվանից մեկ տարի հետո:

11. Սույն հոդվածով սահմանված՝ Վկայականի գործողության կասեցումը, կասեցման հիմքերի վերացումը և Վկայականի գործողության դադարեցումը

կատարվում են Կառավարության սահմանած կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի որակավորման մշտական գործող հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով, որը ենթակա է անհապաղ կատարման և հրամանի բողոքարկումը չի կասեցնում հրամանի գործողությունը կամ կատարումը: Վկայականի գործողության կասեցման, կասեցման հիմքերի վերացման և վկայականի գործողության դադարեցման հրամանների բողոքարկման կարգը սահմանվում է օրենքով:

Հոդված 16.3. Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ զբաղվող անձանց ինքնակարգավորվող կազմակերպությունը

1. Սույն օրենքի համաձայն՝ Ինքնակարգավորվող կազմակերպություն է համարվում այն մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպությունը, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով և որի հիմնադիր են հանդիսանում սույն օրենքի իմաստով որակավորված առնվազն 2 անձինք, ովքեր ունեն առնվազն հինգ տարվա գործող որակավորման վկայական: Գեոդեզիստ և մարկշեյդեր, ինչպես նաև քարտեզագրող, չափագրող, հաշվառող և հողաշինարար հանդիսացող որակավորված անձը կարող է լինել միայն մեկ ինքնակարգավորվող կազմակերպության անդամ: Որակավորված մասնագետը կարող է գործունեություն ծավալել առանց ինքնակարգավորվող կազմակերպությանն անդամակցելու միայն այն դեպքում, երբ Կոմիտեում սահմանված կարգով որևէ ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:

2. Ինքնակարգավորվող կազմակերպությունն ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձի պետական գրանցման պահից: Ինքնակարգավորվող կազմակերպության անվանումը պետք է ցուցում պարունակի վերջինիս գործունեության բնույթի մասին:

3. Ինքնակարգավորվող կազմակերպությունը Կոմիտեում հաշվառվելու նպատակով Կոմիտեի ղեկավարի կողմից սահմանած կարգով ներկայացնում է նախատեսված փաստաթղթերի պատճենները, իր անդամների ցանկը, գործունեության հնգամյա ծրագիրը, ծրագրի նպատակները, կատարվելիք միջոցառումները, ակնկալվող արդյունքերը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը: Սույն մասով նախատեսված փաստաթղթերով սահմանված տվյալների, բացառությամբ գործունեության հնգամյա ծրագրի և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցի, փոփոխության դեպքում ինքնակարգավորվող կազմակերպությունն այդ մասին անհապաղ, սակայն ոչ ուշ քան տվյալների փոփոխությունից հետո եռօրյա ժամկետում Կոմիտեի ղեկավարի կողմից սահմանված կարգով հայտնում է Կոմիտեին:

4. Կոմիտեն, ներկայացված հնգամյա ծրագրին և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցին հավանություն տալու պարագայում, 20-օրյա ժամկետում հաստատում է այն և հաշվառում ինքնակարգավորվող կազմակերպությունը: Ինքնակարգավորվող կազմակերպության հնգամյա ծրագիրը պետք է հիմնված լինի Կառավարության կողմից հաստատված գործունեության միջոցառումների ծրագրի, Կոմիտեի և այլ պետական մարմինների կողմից սահմանած և ոլորտին առնչվող ռազմավարությունների, ինչպես նաև ոլորտում առկա ժամանակակից ուղղությունների վրա: Սույն մասով նախատեսված հնգամյա ծրագիրը կամ այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը ինքնակարգավորվող կազմակերպության դիմումի հիման վրա կարող է փոփոխվել՝ նախապես՝ 1 տարի առաջ ներկայացնելով փոփոխությունների ծրագիրը և դրանց հիմնավորումը Կոմիտե՝ հաստատման: Կոմիտեն, ներկայացված հնգամյա ծրագրի կամ այդ

ծրագրի իրականացման ժամանակացույցի փոփոխությանը հավանություն տալու պարագայում 20-օրյա ժամկետում հաստատում է այն: Հաստատված հնգամյա ծրագրի ավարտից վեց ամիս առաջ ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն հոդվածով սահմանված կարգով Կոմիտե է ներկայացնում հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը: Հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում Կոմիտեն վերադարձնում է ներկայացված փաստաթղթերը՝ սահմանելով առկա թերությունները վերացնելու և փաստաթղթերը կրկին ներկայացնելու մինչև 15-օրյա ժամկետ: Կոմիտեի կողմից մատնանշված թերությունները չվերացնելուց հետո հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը 2-րդ անգամ ներակայացնելը հանդիսանում է հաշվառման մերժման, ինչպես նաև հաշվառված ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառումից հանելու հիմք: Կոմիտեում ինքնակարգավորվող կազմակերպության հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանվում են Կոմիտեի ղեկավարի իրավական ակտով:

5. Ինքնակարգավորվող կազմակերպությունը հանվում է հաշվառումից հետևյալ դեպքերում.

1) եթե ինքնակարգավորվող կազմակերպությունը չի կատարում հաշվառման ներկայացված իր ծրագրի առնվազն 80 տոկոսը կամ կատարում է ժամանակցույցի էական խախտումներով.

2) չի ներկայացնում կամ չի կատարում սույն օրենքի 16.5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերապատրաստման ուսումնական ծրագիրը.

3) չի ներկայացնում ամենամյա հաշվետվությունները, կամ երկու և ավելի անգամ մեկ ամսից ավելի ժամկետով ուշացնում է հաշվետվության ներկայացումը.

4) հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում:

6. Ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության նպատակն իր անդամների գործունեության թափանցիկությանը և արդյունավետության բարձրացմանը նպաստելն է, հավաքական շահերի պաշտպանությունը, իր անդամների վարքագծի կանոնների մշակումը, ընդունումն ու կիրառումը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված լիազորությունների իրագործումը:

7. Ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներն ու խնդիրներն են՝

1) իր անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում.

2) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտի կայացմանը և ընդլայնմանն աջակցելը.

3) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտում մեթոդական աջակցության և խորհրդատվության տրամադրումը.

4) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը և փորձի փոխանակումը.

5) գեոդեզիստի և մարկշեյդերի, ինչպես նաև քարտեզագրողի, չափագրողի, հաշվառողի և հողաշինարարի մասնագիտության ճանաչելիության, վարկանիշի և վստահելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների և ծրագրերի իրականացումը.

6) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտին վերաբերող մասնագիտական գրականության հավաքագրումը, մշակումը, կազմումը և հրատարակումը.

7) բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցով իր անդամների մասնագիտական ուսուցումը և վերապատրաստումը կազմակերպելը.

8) հաշվառման ներկայացված հնգամյա ծրագրի պատշաճ և ժամանակացույցին համապատասխան կատարումն ապահովելը.

9) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտում այլ գործառույթներ.

8. Ինքնակարգավորվող կազմակերպությունը կարող է անձամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայելու է սույն հոդվածով նախատեսված խնդիրների իրականացմանը: Ինքնակարգավորվող կազմակերպությունն իրավունք ունի անձամբ զբաղվելու միայն իր կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով, բացառությամբ գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության և որակավորում պահանջող այլ տեսակի գործունեության:

9. Կոմիտեում կարող են հաշվառվել առավելագույնը հինգ ինքնակարգավորվող կազմակերպություններ: Հաշվառված ինքնակարգավորվող կազմակերպությունների շարքում թափուր տեղ առաջանալու պարագայում Կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրվում է հայտարարություն, որը հիմք է ինքնակարգավորվող կազմակերպության համար սույն հոդվածով սահմանված կարգով ցանկացած ժամանակ հաշվառման նպատակով դիմելու Կոմիտե:

Հոդված 16.4. Ինքնակարգավորվող կազմակերպության գույքը

1. Անդամների (հիմնադիրների) կողմից ինքնակարգավորվող կազմակերպությանը փոխանցվող գույքը հանդիսանում է նրա սեփականությունը: Անդամները պատասխանատվություն չեն կրում ինքնակարգավորվող կազմակերպության պարտավորությունների համար: Ինքնակարգավորվող

կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար: Անդամները ինքնակարգավորվող կազմակերպության ընդհանուր ժողովի սահմանած չափերով և կարգով պարբերական վճարներ են կատարում անդամության համար:

2. Անդամը պարտավոր է վճարել անդամավճար: Անդամավճարի առավելագույն վճարը չի կարող սահմանվել ավելի, քան ամսական 15000 Հայաստանի Հանրապետության դրամը:

Հոդված 16.5. Ինքնակարգավորվող կազմակերպության անդամի վերապատրաստումը

1. Ինքնակարգավորվող կազմակերպությունը յուրաքանչյուր տարի Կոմիտեի հաստատմանն է ներկայացնում անդամների վերապատրաստման ուսումնական ծրագիրը: Հաջորդող տարվա վերապատրաստման ուսումնական ծրագիրը Կոմիտե է ներկայացվում մինչև նախորդ տարվա նոյեմբերի 1-ը: Վերապատրաստման ուսումնական ծրագիրը 20-օրյա ժամկետում հաստատվելուց հետո ինքնակարգավորվող կազմակերպությունը Կոմիտեի ղեկավարի կողմից սահմանված կարգով և ժամկետում հայտարարում է մասնագիտական մրցույթ, որին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները: Ինքնակարգավորվող կազմակերպությունը յուրաքանչյուր տարի պարտավոր է կազմակերպել առնվազն մեկ վերապատրաստման ուսումնական ծրագիր:

2. Ինքնակարգավորվող կազմակերպության անդամները, բացառությամբ գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան ունեցող անդամների, որոնց նկատմամբ սույն մասով սահմանված պահանջները կիրառելի չեն, պարտավոր են անցնել ինքնակարգավորվող կազմակերպության սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում երեսուներկու ժամից պակաս լինել: Ինքնակարգավորվող

կազմակերպության կազմակերպած դասընթացներին մասնակցելու վճարները ենթակա են վճարման այդ դասընթացներին մասնակցողների կողմից: Ինքնակարգավորվող կազմակերպության անդամներն իրավունք ունեն վերապատրաստման համար սահմանված ժամաքանակը լրացնելու նաև ինքնակարգավորվող կազմակերպության սահմանած ծրագրից դուրս՝ գեոդեզիայի, աշխարհագրության, երկրատարածական տվյալների ոլորտներում գիտաժողովներին և դասախոսություններին մասնակցելու միջոցով, որոնց վերաբերյալ պարտավոր են ինքնակարգավորվող կազմակերպությունը ներկայացնելու մասնակցությունը հավաստող համապատասխան փաստաթուղթ:

Հոդված 16.6. Ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը

1. Ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի, իրավական այլ ակտերի և ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրական պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոմիտեն:

2. Ինքնակարգավորվող կազմակերպությունն իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն է ներկայացնում Կոմիտե մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 1-ը:

3. Ինքնակարգավորվող կազմակերպության կողմից ներկայացվող հաշվետվությունը ներառում է Կոմիտե ներկայացված հնգամյա ծրագրի, իր կողմից իրականացված այլ ծրագրերի, ինչպես նաև վերապատրաստման ուսումնական ծրագրի կատարման վերաբերյալ տեղեկատվություն:»:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող որակավորման հանձնաժողովի անդամները շարունակում են մնալ որակավորման հանձնաժողովի անդամներ մինչև Կոմիտեի կողմից նոր անդամների ընտրությունը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Կառավարությունն ընդունում է սույն օրենքի 5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.1-րդ հոդվածի 7-րդ մասից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Կոմիտեի ղեկավարը սույն օրենքի 5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.1-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան հաստատում է որակավորման քննության հարցաշարերը, այդ թվում՝ խնդիրները և առաջադրանքները, քննությանն առաջադրվող հարցերը:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Կոմիտեի ղեկավարը հաստատում է ոլորտի ինքնակարգավորվող կազմակերպությունների՝ Կոմիտեում հաշվառման, հաշվառումից հանելու, հաշվառման համար ներկայացված տվյալների փոփոխությունները Կոմիտե ներկայացնելու, ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից մասնագիտական մրցույթ հայտարարելու կարգերը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառվելու նպատակով համապատասխան դիմումը և կից փաստաթղթերը Կոմիտեի ղեկավարի կողմից սահմանված կարգով ներկայացնում է Կոմիտե:

7. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականները սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո համարվելու են միայն քարտեզագրության, չափագրման, հաշվառման և հողաշինարարության վկայականներ:

8. Սույն օրենքի իմաստով քարտեզագրության, չափագրման, հաշվառման և հողաշինարարության համապատասխան որակավորման վկայականները ստանալու նպատակով որակավորված անձինք դիմում են ներկայացնում Կոմիտե՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո:

9. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրական, հաշվառման և հողաշինարարության որակավորման վկայական ունեցող այն անձինք, որոնք գեոդեզիայի, հողաշինարարության, քարտեզագրության, չափագրման կամ կադաստրի ոլորտներում ունեն մագիստրոսի կրթական աստիճան, սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո իրավունք ունեն դիմելու Կոմիտե՝ սույն օրենքի իմաստով գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման համապատասխան վկայականները ստանալու համար՝ ներկայացնելով դիմում, գեոդեզիայի, հողաշինարարության, քարտեզագրության, չափագրման կամ կադաստրի ոլորտներում մագիստրոսի կրթական աստիճանը հիմնավորող փաստաթուղթ:

10 Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված որակավորման քննության հարցաշարերը, այդ թվում՝ խնդիրները և առաջադրանքները, քննությանն առաջադրվող հարցերը հաստատվելուց հետո երկամյա ժամկետում Կոմիտեն առնվազն երեք անգամ անցկացնում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման քննություններ:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված, ինչպես նաև դրանից հետո անկացված որակավորման քննությունների արդյունքում կամ սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով տրված և գործող գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման վկայական ստացած անձինք համարվում են «Քաղաքաշինության մասին» օրենքի իմաստով հավաստագրված մասնագետներ,

կարող են հանդիսանալ նույն օրենքի իմաստով պատասխանատու մասնագետ և հավաստագրման, այդ թվում՝ շարունակական մասնագիտական զարգացման համապատասխան հավաստագրման ենթակա չեն:

12. Սույն օրենքի 5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.1-րդ հոդվածի 2-րդ մասից, 6-րդ մասից, 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 8-րդ կետերից, 8-11-րդ մասերից բխող իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**««ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» 2023 թվականի հունվարի 17-ի ՀՕ-20-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 1� Օրենքի կարգավորման առարկան և ոլորտը**

2. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական, քարտեզագրական, մարկշեյդերական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման գործունեության իրականացման հետ կապված

հարաբերությունները: Հայաստանի Հանրապետությունում բոլոր գեոդեզիական, քարտեզագրական, մարկշեյդերական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման աշխատանքներն իրականացվում են սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

2. Սույն օրենքի կարգավորման ոլորտն ընդգրկում է գեոդեզիական, քարտեզագրական, մարկշեյդերական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման գործունեությունը, գեոդեզիական, քարտեզագրական, մարկշեյդերական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման բնագավառում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ սուբյեկտների իրավասությունները, միջազգային համագործակցության, ինչպես նաև վեճերի լուծման կարգը և պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար:»:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին և 1.2-րդ կետերով.

«1.1) **ինժեներական գեոդեզիա՝** շենքերի և շինությունների հետազոտությունների, նախագծման, կառուցման և շահագործման ընթացքում կատարված գեոդեզիական աշխատանքների ընթացքում ծագող գործունեության տեսակ.

1.2) **մարկշեյդերական գործունեություն՝** լեռնահանքային արդյունաբերության ոլորտում գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացում.»:

**Հոդված 3.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով.

«15) **որակավորում ունեցող անձ՝** Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ զբաղվող,

Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից որակավորման վկայական ստացած անձ.

16) **գեոդեզիական և մարկշեյդերական գործունեություն իրականացնող անձ՝** որակավորում ունեցող անձը, որը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է իրականացնել ցանկացած տեսակի գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, հողաշինարարական և չափագրական, հաշվառման աշխատանքներ, այդ թվում՝ «Քաղաքաշինության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով լիցենզավորման ենթակա քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցման ենթատեսակ հանդիսացող ինժեներական գեոդեզիայի աշխատանքներ.

17) **քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեություն իրականացնող անձ՝** որակավորում ունեցող անձ, որը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է իրականացնել քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական, հաշվառման, ինչպես նաև իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ հողամասերի հատակագծերի կազմման նպատակով՝ գեոդեզիական աշխատանքներ:»:

**Հոդված 4**. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում «Կադաստրի կոմիտեն է (այսուհետ՝ Կոմիտե)» բառերը փոխարինել «Կոմիտեն է» բառերով:

**Հոդված 5**. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16.1-16.6-րդ հոդվածներով.

**«Հոդված 16.1– Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեության իրականացումը**

14.Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ կարող են զբաղվել Կոմիտեի կողմից որակավորման վկայական (այսուհետ՝ Վկայական) ստացած անձինք:

15.Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~ Կառավարությունը:

16.Սույն հոդվածում նշված աշխատանքների որակի և տվյալների հավաստիության համար պատասխանատվություն են կրում բացառապես որակավորում ունեցող անձինք:

17.Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքներն իրականացվում են անշարժ գույքի սեփականատիրոջ (օգտագործողի) միջոցների հաշվին:

18.Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության իրականացման, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքների իրականացման որակավորման վկայականները դասակարգվում են երկու խմբի՝

1) գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման վկայական.

2) քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեության որակավորման վկայական:

19.~~Մասնագիտական որակավորումը~~Որակավորումը կազմակերպում և իրականացնում է Կոմիտեն՝ որակավորման քննությունների միջոցով, որոնք ընդունում է Կոմիտեի կողմից ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով ստեղծած որակավորման հանձնաժողովը: Որակավորման հանձնաժողովը կազմված է 7 անդամից՝ Կոմիտեի

աշխատակից հանդիսացող նախագահից, քարտուղարից, ինչպես նաև անդամներից, որոնցից երկուսը հանդիսանում են Կոմիտեի աշխատակիցներ, 1-ն ընտրվում է Հայաստանի Հանրապետությունում գործող գիտական հաստատություններից, մնացած 2-ը՝ Կոմիտեի կողմից հաշվառված ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից առաջադրած անդամներից: Որակավորման հանձնաժողովի անդամների թեկնածուների ներկայացման և ընտրության կարգը սահմանվում է ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության որոշմամբ:

20. Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ զբաղվելու որակավորման անցկացման կարգն ու պայմանները, որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացնելու կարգը, որակավորման քննությունների հարցաշարերի, այդ թվում՝ խնդիրների և առաջադրանքների կազմման կարգը, որակավորման վկայականի ձևը սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~Կառավարությունը: Որակավորման անցկացման կարգով սահմանվում են որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման կարգը, ժամկետները, քննության ժամանակ առաջադրվող հարցերի, խնդիրների և առաջադրանքնենրի քանակը, քննությունների արդյունքների գնահատման կարգը, քննության անցկացման համար նախատեսված ժամանակը, սարքածրագրային միջոցներից օգտվելու կարգը, որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորների քանակը, քննության արդյունքների բողոքարկման կարգը, ինչպես նաև քննությունը պատշաճ անցկացնելուն ուղղված այլ դրույթներ:

21.Որակավորման քննության հարցաշարերը, այդ թվում՝ խնդիրները և առաջադրանքները, քննությանն առաջադրվող հարցերը նախապատրաստում է որակավորման հանձնաժողովը, որոնք հաստատում է Կոմիտեի ղեկավարը: Քննության հարցաշարերը, առաջադրվող հարցերի քանակը հրապարակվում են

Կոմիտեի պաշտոնական կայքում ոչ ուշ, քան քննության անցկացման օրվանից քսան օր առաջ:

22. Քննության դրական արդյունքներով Կոմիտեի ղեկավարը որոշում է կայացնում որակավորման վկայական տրամադրելու վերաբերյալ:

23. Որակավորման վկայականը ուժի մեջ է մտնում այն ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով որակավորված անձին հանձնելու օրվանից և գործում է անժամկետ:

24. Կոմիտեն վկայական ստացած անձանց անվանացանկը, իսկ վերջիններիս կապի միջոցները և աշխատանքի վայրի մասին տեղեկությունները հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ միայն վերջիններիս գրավոր համաձայնության առկայության դեպքում, որը տրվում է ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով որակավորման քննության մասնակցության դիմում ներկայացնելիս:

25. Որակավորման վկայականի կամ դրա կրկնօրինակի կորստի կամ ոչ պիտանի դառնալու, որակավորված անձի անվան կամ ազգանվան փոփոխման դեպքում որակավորված անձը վկայականի կրկնօրինակ կամ վերաձևակերպված վկայական ստանալու դիմում է ներկայացնում Կոմիտե՝ ներկայացնելով պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիր, որը Կոմիտեն տրամադրում է ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով և ձևով՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Որակավորման վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

26. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից իրականացվող քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքների վրա:

**Հոդված 16.2։ Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության որակավորման վկայականների գործողության կասեցման ու դադարեցման հիմքերը և կարգը**

1. ~~Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության որակավորման վկայականների (այսուհետ՝ վկայական)~~Վկայականների գործողության կասեցման հիմքերն են՝

1) ~~վկայականի~~Վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ դատական ակտը։

~~2) Հայաստանի Հանրապետության կառավարության~~2) Կառավարության սահմանած գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները չկատարելը, եթե դրանց հիմքով կատարվել է պետական գրանցում՝ Կոմիտեի նախաձեռնությամբ ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով: Սույն կետով սահմանված փաստաթղթերի հիմքով պետական գրանցում կատարված չլինելու պարագայում, Կոմիտեն կասեցնում է ~~վկայականի~~Վկայականի գործողությունը բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված բողոքի կամ ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի դիմումի հիման վրա։

3) գեոդեզիստների և մարկշեյդերների, ինչպես նաև քարտեզագրողների, չափագրողների, հաշվառողների և հողաշինարարների ինքնակարգավորվող կազմակերպությանը (այսուհետ՝ ինքնակարգավորվող կազմակերպություն) մեկ ամիս անընդմեջ չանդամակցելը՝ մինչև վերջինիս կողմից ինքնակարգավորվող կազմակերպությանը անդամակցելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը կասեցվում է ինքնակարգավորվող կազմակերպության կողմից

Կոմիտեին ներկայացրած կասեցման դիմումի և ինքնակարգավորվող կազմակերպության անդամակցությունը դադարեցված լինելը հավաստող տեղեկանքի հիման վրա.

4) գեոդեզիստների և մարկշեյդերների, ինչպես նաև քարտեզագրողների, չափագրողների, հաշվառողների և հողաշինարարների ինքնակարգավորվող կազմակերպության անդամավճարը 3 ամիս անընդմեջ չվճարելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը համարվում է կասեցված ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կոմիտեին ներկայացրած կասեցման դիմումի և անդամավճարը վճարված չլինելու մասին տեղեկանքի հիման վրա՝ մինչև վճարումներն ամբողջությամբ կատարելը:

5) գեոդեզիստների և մարկշեյդերների, ինչպես նաև քարտեզագրողների, չափագրողների, հաշվառողների և հողաշինարարների ինքնակարգավորվող կազմակերպության սահմանած վերապատրաստման դասընթացների սույն օրենքով սահմանված նվազագույն ժամաքանակի առնվազն 80 տոկոսին չմասնակցելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը կասեցվում է ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կոմիտեին ներկայացրած կասեցման դիմումի և վերապատրաստման դասընթացների սույն օրենքով սահմանված նվազագույն ժամաքանակի առնվազն 80 տոկոսին մասնակցություն ապահոված չլինելու մասին տեղեկանքի հիման վրա՝ մինչև վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականության ամբողջությամբ կատարումը

6) պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև հանրային պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում՝ իր լիազորությունների ժամկետով.

7) որակավորված անձի կողմից կազմած իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերում ոչ տեխնիկական բնույթի ~~այնպիսի~~ սխալներ կատարելը: Սույն կետի իմաստով ոչ տեխնիկական բնույթի սխալ է համարվում այն սխալը, որը հանգեցնում է անշարժ գույքի հարկի շեղման: Սույն կետի իմաստով ոչ

տեխնիկական բնույթի սխալ կատարելը չի հանգեցնում վկայականի կասեցման, եթե այդ սխալն ուղղվել է սխալ թույլ տված որակավորված անձի նախաձեռնությամբ: Սխալ պարունակող փաստաթղթի հիմքով պետական գրանցում կատարված չլինելու պարագայում Կոմիտեն իր նախաձեռնությամբ կամ այլ անձի, ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի դիմումի հիման վրա կասեցնում է վկայականի գործողությունը։

8) որակավորված անձի կողմից կազմած իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերում երկու կամ ավելի տեխնիկական բնույթի սխալներ կատարելը, եթե սխալ պարունակող փաստաթղթի հիմքով կատարվել է պետական գրանցում: Սույն կետի իմաստով տեխնիկական բնույթի սխալ կատարելը չի հանգեցնում վկայականի կասեցման, եթե այդ սխալն ուղղվել է սխալ թույլ տված որակավորված անձի նախաձեռնությամբ: Սխալ պարունակող փաստաթղթի հիմքով պետական գրանցում կատարված չլինելու, ինչպես նաև այլ նպատակով կազմված հատակագծերում ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած հատակագծերի ձևերի, հատակագծերին ներկայացվող պահանջների և հատակագծերի ներկայացման կարգի խախտման պարագայում Կոմիտեն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացված բողոքի հիման վրա կասեցնում է վկայականի գործողությունը։

9) ~~Սեփականսեփական~~սեփական դիմումի հիման վրա։

~~10)~~2" Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 9-րդ կետերի հիմքով վկայականի կասեցումը վկայականի դադարեցման համար հիմք չի հանդիսանում:

~~2~~3։ Վկայականների գործողությունը կասեցնում է Կոմիտեն՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված դեպքերում վկայականների գործողությունը կասեցնում է Կոմիտեն՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով ~~Հայաստանի Հանրապետության~~

~~կառավարության~~Կառավարության սահմանած կարգով որակավորման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա:

~~3~~4. Վկայականի գործողությունը կասեցնելու մասին Կոմիտեի ղեկավարի հրամանն այն կայացնելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսանեղածված տարբերակը) հանձնվում է համապատասխան որակավորված անձին՝ էլեկտրոնային եղանակով՝ ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով վերջինիս առցանց գրասենյակում տեղադրելու միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն առցանց գրասենյակում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանը ուժի մեջ է մտնում առցանց գրասենյակում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվան հաջորդող օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ առցանց գրասենյակից տեղեկություններ ստանալու համար և Կոմիտեին անհապաղ գրավոր տեղեկացնել անձնական գրասենյակից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն համապատասխան հրամանը փոստային ծառայության միջոցով ուղարկում է որակավորված անձին:

~~3~~5. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ, 8-րդ կետերով սահմանված հիմքերով վկայականի գործողությունը կասեցվում է մեկ ամիս ժամկետով: Վկայականի գործողությունը չի կարող կասեցվել, եթե նշված կետերով սահմանված խախտումների կատարման օրվանից անցել է երեք տարուց ավելի:

~~4~~6. Վկայականի գործողության կասեցման ընթացքում որակավորված անձն իրավունք չունի իրականացնելու գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեություն, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործունեությունն ուղղված

է կասեցման պատճառները վերացնելուն կամ նախքան կասեցումը կատարված և իրավունքի պետական գրանցման նպատակով ներկայացված գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության աշխատանքները ուղղելուն:

~~5~~7 Վկայականի գործողության դադարեցման հիմքերն են՝

1) վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերում հետագայում հայտնաբերված կեղծ կամ խեղաթյուրված տվյալների առկայությունը

2) որակավորված անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ դատական ակտը

3) վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որակավորված անձի դիմումը

4) վկայականի գործողության կասեցման ժամկետում սույն օրենքի իմաստով որակավորման ենթակա գործունեություն իրականացնելը

5) մեկ տարվա ընթացքում երկու անգամ վկայականի գործողության կասեցումը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ կետերով սահմանված դեպքերի

6) որակավորված անձի մահը հավաստող փաստաթուղթը:

~~6.~~ 8. Վկայականների գործողությունը դադարեցնում է Կոմիտեն՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով: Սույն հոդվածի ~~5~~7-րդ մասի 1-ին, 4-րդ, 5-րդ կետերով սահմանված դեպքերում վկայականների գործողությունը դադարեցնում է Կոմիտեն՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով՝ ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով որակավորման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա:

~~7~~9. Վկայականի գործողության դադարեցման մասին Կոմիտեի ղեկավարի հրամանն (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը) կայացնելու

օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնվում է համապատասխան որակավորված անձին՝ էլեկտրոնային եղանակով՝ ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով վերջինիս առցանց գրասենյակում տեղադրելու միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն առցանց գրասենյակում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանն ուժի մեջ է մտնում առցանց գրասենյակում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվան հաջորդող օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ առցանց գրասենյակից տեղեկություններ ստանալու համար և Կոմիտեին անհապաղ գրավոր տեղեկացնել անձնական գրասենյակից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն համապատասխան հրամանը փոստային ծառայության միջոցով ուղարկում է որակավորված անձին: Վկայականի գործողության դադարեցման մասին Կոմիտեի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը Կոմիտեի պաշտոնական կայքում իրականացվում է վկայականի գործողության դադարեցման մասին նշում:

~~8~~10. Վկայականի գործողության դադարեցումից հետո նոր վկայական ստանալու համար անձը ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով կարող է դիմել ոչ շուտ, քան դրա գործողության դադարեցման օրվանից մեկ տարի հետո:

~~9.~~11. Սույն հոդվածով սահմանված՝ Վկայականի գործողության կասեցումը, կասեցման հիմքերի վերացումը և ~~վկայականի~~Վկայականի գործողության դադարեցումը կատարվում են ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~Կառավարության սահմանած կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և

հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով, որը ենթակա է անհապաղ կատարման և հրամանի բողոքարկումը չի կասեցնում հրամանի գործողությունը կամ կատարումը: Վկայականի գործողության կասեցման, կասեցման հիմքերի վերացման և վկայականի գործողության դադարեցման հրամանների բողոքարկման կարգը սահմանվում է օրենքով:

**Հոդված 16.3. Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ զբաղվող անձանց ինքնակարգավորվող կազմակերպությունը**

1. Սույն օրենքի համաձայն՝ գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեությամբ զբաղվող անձանց ինքնակարգավորվող կազմակերպություն (այսուհետ՝ ինքնակարգավորվող կազմակերպություն)Ինքնակարգավորվող կազմակերպություն է համարվում այն մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպությունը, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով և որի հիմնադիր են հանդիսանում սույն օրենքի իմաստով որակավորված առնվազն 2 անձինք, ովքեր ունեն առնվազն հինգ տարվա գործող որակավորման վկայական: Գեոդեզիստ և մարկշեյդեր, ինչպես նաև քարտեզագրող, չափագրող, հաշվառող և հողաշինարար հանդիսացող որակավորված անձը կարող է լինել միայն մեկ ինքնակարգավորվող կազմակերպության անդամ: Որակավորված մասնագետը կարող է գործունեություն ծավալել առանց ինքնակարգավորվող կազմակերպությանն անդամակցելու միայն այն դեպքում, երբ Կոմիտեում սահմանված կարգով որևէ ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:

2. Ինքնակարգավորվող կազմակերպությունն ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձի պետական գրանցման պահից: Ինքնակարգավորվող կազմակերպության անվանումը պետք է ցուցում պարունակի վերջինիս գործունեության բնույթի մասին:

3. Ինքնակարգավորվող կազմակերպությունը Կոմիտեում հաշվառվելու նպատակով Կոմիտեի ղեկավարի կողմից սահմանած կարգով ներկայացնում է նախատեսված փաստաթղթերի պատճենները, իր անդամների ցանկը, գործունեության հնգամյա ծրագիրը, ծրագրի նպատակները, կատարվելիք միջոցառումները, ակնկալվող արդյունքերը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը: Սույն մասով նախատեսված փաստաթղթերով սահմանված տվյալների, բացառությամբ գործունեության հնգամյա ծրագրի և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցի, փոփոխության դեպքում ինքնակարգավորվող կազմակերպությունն այդ մասին անհապաղ, սակայն ոչ ուշ քան տվյալների փոփոխությունից հետո եռօրյա ժամկետում Կոմիտեի ղեկավարի կողմից սահմանված կարգով հայտնում է Կոմիտեին:

4. Կոմիտեն, ներկայացված հնգամյա ծրագրին և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցին հավանություն տալու պարագայում, 20-օրյա ժամկետում հաստատում է այն և հաշվառում ինքնակարգավորվող կազմակերպությունը: Ինքնակարգավորվող կազմակերպության հնգամյա ծրագիրը պետք է հիմված լինի ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~ Կառավարության կողմից հաստատված գործունեության միջոցառումների ծրագրի, Կոմիտեի և այլ պետական մարմինների կողմից սահմանած և ոլորտին առնչվող ռազմավարությունների, ինչպես նաև ոլորտում առկա ժամանակակից ուղղությունների վրա: Սույն մասով նախատեսված հնգամյա ծրագիրը կամ այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը ինքնակարգավորվող կազմակերպության դիմումի հիման վրա կարող է փոփոխվել՝ նախապես՝ 1 տարի առաջ ներկայացնելով փոփոխությունների ծրագիրը և դրանց հիմնավորումը Կոմիտե՝ հաստատման: Կոմիտեն, ներկայացված

հնգամյա ծրագրի կամ այդ ծրագրի իրականացման ժամանակացույցի փոփոխությանը հավանություն տալու պարագայում 20-օրյա ժամկետում հաստատում է այն: Հաստատված հնգամյա ծրագրի ավարտից վեց ամիս առաջ ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն հոդվածով սահմանված կարգով Կոմիտե է ներկայացնում հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը: Հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում Կոմիտեն վերադարձնում է ներկայացված փաստաթղթերը՝ սահմանելով առկա թերությունները վերացնելու և փաստաթղթերը կրկին ներկայացնելու մինչև 15-օրյա ժամկետ: Կոմիտեի կողմից մատնանշված թերությունները չվերացնելուց հետո հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը 2-րդ անգամ ներակայացնելը հանդիսանում է հաշվառման մերժման, ինչպես նաև հաշվառված ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառումից հանելու հիմք: Կոմիտեում ինքնակարգավորվող կազմակերպության հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանվում են Կոմիտեի ղեկավարի իրավական ակտով:

5. Ինքնակարգավորվող կազմակերպությունը հանվում է հաշվառումից հետևյալ դեպքերում

1) եթե ինքնակարգավորվող կազմակերպությունը չի կատարում հաշվառման ներկայացված իր ծրագրի առնվազն 80 տոկոսը կամ կատարում է ժամանակցույցի էական խախտումներով.

2) չի ներկայացնում կամ չի կատարում սույն օրենքի 16.5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերապատրաստման ուսումնական ծրագիրը.

3) չի ներկայացնում ամենամյա հաշվետվությունները, կամ երկու և ավելի անգամ մեկ ամսից ավելի ժամկետով ուշացնում է հաշվետվության ներկայացումը.

4) հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում:

6. Ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության նպատակն իր անդամների գործունեության թափանցիկությանը և արդյունավետության բարձրացմանը նպաստելն է, հավաքական շահերի պաշտպանությունը, իր անդամների վարքագծի կանոնների մշակումը, ընդունումն ու կիրառումը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված լիազորությունների իրագործումը:

7. Ինքնակարգավորվող կազմակերպության գործառույթներն ու խնդիրներն են՝

1) իր անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում.

2) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտի կայացմանը և ընդլայնմանն աջակցելը.

3) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտում մեթոդական աջակցության և խորհրդատվության տրամադրումը.

4) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը և փորձի փոխանակումը.

5) գեոդեզիստի և մարկշեյդերի, ինչպես նաև քարտեզագրողի, չափագրողի, հաշվառողի և հողաշինարարի մասնագիտության ճանաչելիության, վարկանիշի և վստահելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների և ծրագրերի իրականացումը.

6) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտին վերաբերող մասնագիտական գրականության հավաքագրումը, մշակումը, կազմումը և հրատարակումը.

7) բարձրագույն ուսումնական հաստատությունների միջոցով իր անդամների մասնագիտական ուսուցումը և վերապատրաստումը կազմակերպելը.

8) հաշվառման ներկայացված հնգամյա ծրագրի պատշաճ և ժամանակացույցին համապատասխան կատարումն ապահովելը.

9) գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրական, չափագրողական, հաշվառողական և հողաշինարարական ոլորտում այլ գործառույթներ։

8. Ինքնակարգավորվող կազմակերպությունը կարող է անձամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայելու է սույն հոդվածով նախատեսված խնդիրների իրականացմանը։ Ինքնակարգավորվող կազմակերպությունն իրավունք ունի անձամբ զբաղվելու միայն իր կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով, բացառությամբ գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության և որակավորում պահանջող այլ տեսակի գործունեության։

9. Կոմիտեում կարող են հաշվառվել առավելագույնը հինգ ինքնակարգավորվող կազմակերպություններ։ Հաշվառված ինքնակարգավորվող կազմակերպությունների շարքում թափուր տեղ առաջանալու պարագայում Կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրվում է հայտարարություն, որը հիմք է ինքնակարգավորվող կազմակերպության համար սույն հոդվածով սահմանված կարգով ցանկացած ժամանակ հաշվառման նպատակով դիմելու Կոմիտե։

**Հոդված 16.4. Ինքնակարգավորվող կազմակերպության գույքը~~, կառավարման մարմինները~~**

3. Անդամների (հիմնադիրների) կողմից ինքնակարգավորվող կազմակերպությանը փոխանցվող գույքը հանդիսանում է նրա սեփականությունը։ Անդամները պատասխանատվություն չեն կրում ինքնակարգավորվող

կազմակերպության պարտավորությունների համար: Ինքնակարգավորվող կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար: Անդամները ինքնակարգավորվող կազմակերպության ընդհանուր ժողովի սահմանած չափերով և կարգով պարբերական վճարներ են կատարում անդամության համար:

4. Անդամը պարտավոր է վճարել անդամավճար: Անդամավճարի առավելագույն վճարը չի կարող սահմանվել ավելի, քան ամսական 15000 Հայաստանի Հանրապետության դրամը:

~~3. Ինքնակարգավորվող կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է, որը կազմակերպության ղեկավարումն իրականացնում է տարեկան կամ արտահերթ ժողովների գումարման միջոցով: Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների երկու երրորդը: Ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերով՝ բոլոր անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով: Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝~~

~~1) ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրության, կանոնների, կարգերի ընդունումը և դրանցում փոփոխությունների կատարումը.~~

~~2) ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի, վերահսկիչ ծառայության անդամների և ղեկավարի ընտրությունը և նրանց լիազորությունների դադարեցումը.~~

~~3) ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հաստատումը.~~

~~4) ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ հարցեր.~~

~~5) ինքնակարգավորվող կազմակերպության անդամավճարի չափը և վճարման կարգը սահմանելը.~~

~~6) գեոդեզիստի և մարկշեյդերի, ինչպես նաև քարտեզագրողի, չափագրողի, հաշվառող և հողաշինարարի վարքագծի կանոնների ընդունումը:~~

~~4. Ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհուրդն ընտրում է գործադիր մարմին, իրականացնում է կանոնադրությամբ և ընդհանուր ժողովի որոշումներով իրեն վերապահված այլ լիազորություններ: Դիտորդ խորհրդի անդամների քանակը և գործունեության կարգը սահմանվում է կանոնադրությամբ: Դիտորդ խորհրդի իրավասության հարցերը չեն կարող փոխանցվել գործադիր մարմիններին: Դիտորդ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել գործադիր տնօրեն կամ գործադիր մարմնի անդամ (ղեկավար), կարգապահական հանձնաժողովի անդամ (ղեկավար):~~

~~5. Գործադիր մարմինը կազմակերպում է ինքնակարգավորվող կազմակերպության աշխատանքները և հաշվետու է դիտորդ խորհրդին: Գործադիր մարմնի իրավասությունները սահմանվում են ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությամբ: Գործադիր տնօրենը կամ կազմակերպության ղեկավարը պետք է ունենա Կոմիտեի կողմից տրված գեոդեզիական և մարկշեյդերական կամ քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեության վկայական և չի կարող միաժամանակ լինել կարգապահական հանձնաժողովի անդամ:~~

–

**Հոդված 16.5. Ինքնակարգավորվող կազմակերպության անդամի վերապատրաստումը**

1. Ինքնակարգավորվող կազմակերպությունը յուրաքանչյուր տարի Կոմիտեի հաստատմանն է ներկայացնում անդամների վերապատրաստման ուսումնական ծրագիրը: Հաջորդող տարվա վերապատրաստման ուսումնական ծրագիրը Կոմիտե է ներկայացվում մինչև նախորդ տարվա նոյեմբերի 1-ը: Վերապատրաստման ուսումնական ծրագիրը 20-օրյա ժամկետում հաստատվելուց հետո

ինքնակարգավորվող կազմակերպությունը Կոմիտեի ղեկավարի կողմից սահմանված կարգով և ժամկետում հայտարարում է մասնագիտական մրցույթ, որին մասնակցելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները: Ինքնակարգավորվող կազմակերպությունը յուրաքանչյուր տարի պարտավոր է կազմակերպել առնվազն մեկ վերապատրաստման ուսումնական ծրագիր:

2. Ինքնակարգավորվող կազմակերպության անդամները, բացառությամբ գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան ունեցող անդամների, որոնց նկատմամբ սույն մասով սահմանված պահանջները կիրառելի չեն, պարտավոր են անցնել ինքնակարգավորվող կազմակերպության սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում երեսուներկու ժամից պակաս լինել: Ինքնակարգավորվող կազմակերպության կազմակերպած դասընթացներին մասնակցելու վճարները ենթակա են վճարման այդ դասընթացներին մասնակցողների կողմից: Ինքնակարգավորվող կազմակերպության անդամներն իրավունք ունեն վերապատրաստման համար սահմանված ժամաքանակը լրացնելու նաև ինքնակարգավորվող կազմակերպության սահմանած ծրագրից դուրս՝ գեոդեզիայի, աշխարհագրության, երկրատարածական տվյալների ոլորտներում գիտաժողովներին և դասախոսություններին մասնակցելու միջոցով, որոնց վերաբերյալ պարտավոր են ինքնակարգավորվող կազմակերպությունը ներկայացնելու մասնակցությունը հավաստող համապատասխան փաստաթուղթ:

**Հոդված 16.6. Ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունը**

1. Ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի, իրավական այլ ակտերի և ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրական

պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոմիտեն:

2. Ինքնակարգավորվող կազմակերպությունն իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն է ներկայացնում Կոմիտե մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 1-ը:

3. Ինքնակարգավորվող կազմակերպության կողմից ներկայացվող հաշվետվությունը ներառում է Կոմիտե ներկայացված հնգամյա ծրագրի, իր կողմից իրականացված այլ ծրագրերի, ինչպես նաև վերապատրաստման ուսումնական ծրագրի կատարման վերաբերյալ տեղեկատվություն:»:

**Հոդված ~~5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~6.**

7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

8. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող որակավորման հանձնաժողովի անդամները շարունակում են մնալ որակավորման հանձնաժողովի անդամներ մինչև Կոմիտեի կողմից նոր անդամների ընտրությունը:

9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~Կառավարությունն ընդունում է սույն օրենքի ~~4~~5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.1-րդ հոդվածի 7-րդ մասից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը:

10. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Կոմիտեի ղեկավարը սույն օրենքի ~~4~~5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.1-րդ հոդվածի ~~7~~8-րդ մասին համապատասխան հաստատում է որակավորման քննության հարցաշարերը, այդ թվում՝ խնդիրները և առաջադրանքները, քննությանն առաջադրվող հարցերը:

11. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Կոմիտեի ղեկավարը հաստատում է ոլորտի ինքնակարգավորվող կազմակերպությունների՝ Կոմիտեում հաշվառման, հաշվառումից հանելու, հաշվառման համար ներկայացված տվյալների փոփոխությունները Կոմիտե ներկայացնելու, ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից մասնագիտական մրցույթ հայտարարելու կարգերը:

12. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառվելու նպատակով համապատասխան դիմումը և կից փաստաթղթերը Կոմիտեի ղեկավարի կողմից սահմանված կարգով ներկայացնում է Կոմիտե:

7. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման- վկայականները սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո համարվելու են միայն քարտեզագրության, չափագրման, հաշվառման և հողաշինարարության վկայականներ:

8. Սույն օրենքի իմաստով քարտեզագրության, չափագրման, հաշվառման և հողաշինարարության համապատասխան որակավորման վկայականները ստանալու նպատակով որակավորված անձինք դիմում են ներկայացնում Կոմիտե՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո:

~~7~~9. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրական, հաշվառման և հողաշինարարության որակավորման վկայական ունեցող այն անձինք, որոնք գեոդեզիայի, հողաշինարարության, քարտեզագրության, չափագրման կամ կադաստրի ոլորտներում ունեն մագիստրոսի կրթական աստիճան, սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ

իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո իրավունք ունեն դիմելու Կոմիտե՝ սույն օրենքի իմաստով գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման համապատասխան վկայականները ստանալու համար՝ ներկայացնելով դիմում, ~~–~~գեոդեզիայի, հողաշինարարության, քարտեզագրության, չափագրման կամ կադաստրի ոլորտներում մագիստրոսի կրթական աստիճանը հիմնավորող փաստաթուղթ:

~~8.~~10 Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված որակավորման քննության հարցաշարերը, այդ թվում՝ խնդիրները և առաջադրանքները, քննությանն առաջադրվող հարցերը հաստատվելուց հետո երկամսյա ժամկետում Կոմիտեն առնվազն երեք անգամ անցկացնում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման քննություններ:

~~9~~11. Սույն հոդվածի ~~8~~10-րդ մասով սահմանված, ինչպես նաև դրանից հետո անկացված որակավորման քննությունների արդյունքում կամ սույն հոդվածի ~~7~~9-րդ մասով սահմանված կարգով տրված և գործող գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության որակավորման վկայական ստացած անձինք համարվում են «Քաղաքաշինության մասին» օրենքի իմաստով հավաստագրված մասնագետներ, կարող են հանդիսանալ նույն օրենքի իմաստով պատասխանատու մասնագետ և հավաստագրման, այդ թվում՝ շարունակական մասնագիտական զարգացման~~-~~համապատասխան հավաստագրման ենթակա չեն:

~~10~~12. Սույն օրենքի ~~4~~5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 16.1-րդ հոդվածի 2-րդ մասից, ~~–~~6-րդ մասից, 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 8-րդ կետերից, ~~6-8~~8-11-րդ մասերից բխող իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

## Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

### ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ՀՕ-431-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» Կ-862-11"06"2024-ՏՀ-011/1 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| N | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը) | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **«ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1 | ՀՀ կառավարություն | Նախագծի վերնագիր | Նախագծի վերնագրում առաջարկում ենք «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» շաղկապը և բառը, քանզի Նախագծով նախատեսվում են «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) ոչ միայն լրացումներ, այլ նաև փոփոխություն՝ ի դեմ Նախագծի 1-ին հոդվածի: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 2 | ՀՀ կառավարություն | Նախագծի 3-րդ | Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նոր լրացվող 15-րդ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հոդված | կետում օգտագործվում է «Կադաստրի կոմիտեի» բառակապակցությունը: Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը Կադաստրի կոմիտեն է (այսուհետ՝ Կոմիտե)»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը:»: Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նոր լրացվող 15-րդ կետում առաջին անգամ է կիրառություն ստանալու «Կադաստրի կոմիտե» արտահայտությունը, հետևաբար անհրաժեշտ է հենց Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նոր լրացվող 15-րդ կետում սահմանել նրա կրճատ տարբերակը «(այսուհետ՝ Կոմիտե)» տեսքով՝ միաժամանակ նախատեսելով փոփոխություն Օրենքի 7-րդ հոդվածում և «Կադաստրի կոմիտեն է (այսուհետ՝ Կոմիտե)» արտահայտությունը փոխարինել «Կոմիտեն է» ձևակերպմամբ: | | |
| 3 | ՀՀ կառավարություն | Նախագծ | Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ի 3-րդ հոդված | «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 2-րդ հոդվածում նոր լրացվող 16-րդ կետում առաջարկում ենք «Քաղաքաշինության մասին» օրենքին հղում կատարելիս պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:», և հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը: | | |
| 4 | ՀՀ կառավարություն | Նախագծի 4-րդ հոդված (լրամշակված 5-րդ հոդված) | Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.1-ին հոդվածում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը առ այն՝ «( ) Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով ( ) »: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 5 | ՀՀ կառավարություն | Նախագծի 4-րդ հոդված (լրամշակված 5-րդ հոդված) | Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.1-ին հոդվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ, 10-12-րդ մասերում, 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 8-րդ կետերում, 3-րդ մասում և 6-9 մասերում, 16.3-րդ հոդվածի 4-րդ մասում, 5-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ «Նորմատիվ իրավական | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:», քանզի օգտագործվել է «Հայաստանի Հանրապետության կառավարություն» ձևակերպումը՝ թեև Օրենքում օգտագործվում է «Կառավարություն» ձևակերպումը:<br>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահպանման պահանջը վերաբերում է նաև Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.1-ին հոդվածի 6-րդ մասին, որում օգտագործվել է «մասնագիտական որակավորում» արտահայտությունը մինչդեռ նույն միտքը Նախագծում արտահայտվել է «որակավորում» ձևակերպման միջոցով: | | |
| 6 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 4-րդ հոդված (լրամշակված 5-րդ հոդված) | Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի համարից առաջ առաջարկում ենք լրացնել «Հոդված» բառը՝ հետևելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտերում նորմերը շարադրվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով: Հոդվածի համարից առաջ գրվում է «Հոդված» բառը:»: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 7 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 4-րդ հոդված | «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահպանման պահանջը վերաբերելի է նաև Նախագծի 4-րդ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | (լրամշակվ ած 5-րդ հոդված) | հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն՝ «Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության որակավորման վկայականների (այսուհետ՝ վկայական) գործողության կասեցման հիմքերն են՝( )»: Գտնում ենք, որ Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասում այս պահանջը չի պահպանվել, քանի որ «որակավորման վկայականներ» հասկացությունը արդեն իսկ օգտագործվել է Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.1-ին հոդվածում, ուստի արտահայտության կրճատ տարբերակը պետք է նախատեսված լիներ հենց այդ հոդվածում, իսկ մյուս հոդվածներում կիրառվեր կրճատ տարբերակով:<br>Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.3-րդ հոդվածում օգտագործվող «(այսուհետ՝ ինքնակարգավորվող կազմակերպություն)» կրճատ տաբերակի կիրառմանը, քանզի այն պետք է սահմանվեր Նախագծի<br>4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում: | | |
| 8 | ՀՀ **կառավարություն** | Նախագծ ի 4-րդ | Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հոդված (լրամշակված 5-րդ հոդված) | մասի 7-րդ համաձայն՝ «7) որակավորված անձի կողմից կազմած իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերում ոչ տեխնիկական բնույթի այնպիսի սխալներ կատարելը, որը հանգեցնում է անշարժ գույքի հարկի շեղման: Սույն կետի իմաստով ոչ տեխնիկական բնույթի սխալ կատարելը չի հանգեցնում վկայականի կասեցման, եթե այդ սխալն ուղղվել է սխալ թույլ տված որակավորված անձի նախաձեռնությամբ: Սխալ պարունակող փաստաթղթի հիմքով պետական գրանցում կատարված չլինելու պարագայում Կոմիտեն իր նախաձեռնությամբ կամ այլ անձի, ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի դիմումի հիման վրա կասեցնում է վկայականի գործողությունը. <br> Ցանկանում ենք նշել, որ հիշատակված «ոչ տեխնիկական բնույթի սխալ» հասկացությունները ունեն իրավական որոշակիության խնդիր: Սահմանադրական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքի սահմանադրաիրավական բովանդակությանը, իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ-1621 որոշման մեջ հայտնել է իրավական դիրքորոշում առ այն, որ « ( ) Իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մեկնաբանությունների կամ շփոթության: Մինչդեռ Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում հիշատակվող հասկացությունը անհրաժեշտ չափով հստակ և որոշակի չեն, հանդիսանում են գնահատողական կատեգորիայի մակարդակի և յուրաքանչյուր անգամ իրավակիրառ մարմնի կողմից տարաբնույթ մեկնաբանությունների կարող են ենթարկվել՝ հանգեցնելով Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառման և վկայականի գործողության կասեցման: Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը վերանայել և որոշակիացնել նրանցում օգտագործվող «ոչ տեխնիկական բնույթի սխալ» հասկացությունը: | | |
| 9 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 4-րդ հոդված (լրամշակված 5-րդ հոդված) | Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ «Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության որակավորման վկայականների (այսուհետ՝ վկայական) գործողության կասեցման հիմքերն են՝ ( ) 10) Սույն մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 9-րդ կետերի հիմքով վկայականի կասեցումը վկայականի դադարեցման համար հիմք չի հանդիսանում:»: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Ցանկանում ենք նշել, որ Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով թվարկվում են «Գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության որակավորման վկայականների գործողության կասեցման հիմքերը՝ շարունակելով նախադասության միտքը: Մինչդեռ 10-րդ կետը իմաստային առումով չի շարունակում Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը, ուստի առաջարկում ենք այն նախատեսել առանձին մասում: | | |
| 10 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 4-րդ հոդված (լրամշակված 5-րդ հոդված) | Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Վկայականի գործողության կասեցումը, կասեցման հիմքերի վերացումը և վկայականի գործողության դադարեցումը կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական և մարկշեյդերական, ինչպես նաև քարտեզագրության, չափագրական, հաշվառման և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ Կոմիտեի ղեկավարի հրամանով, որը | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ենթակա է անհապաղ կատարման և հրամանի բողոքարկումը չի կասեցնում հրամանի գործողությունը կամ կատարումը: Վկայականի գործողության կասեցման, կասեցման հիմքերի վերացման և վկայականի գործողության դադարեցման հրամանների բողոքարկման կարգը սահմանվում է օրենքով:»: Ցանկանում ենք նշել, որ Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում են վկայականի գործողության կասեցման այն առանձին դեպքերը՝ ի դեմս Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ և 8-րդ կետերի, որոնց դեպքում կասեցումը իրականացվում է որակավորման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա: Գտնում ենք, որ սույն կարգավորման առկայության պարագայում հակասական է Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումը առ այն, որ ցանկացած հիմքով կասեցում ևս իրականացվում է որակավորման հանձնաժողովի եզրակացությամբ:<br>Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.2-րդ հոդվածի 2-րդ և 9-րդ մասերը համապատասխանեցնել միմյանց: | | |
| 11 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 4-րդ | Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր լրացվող 16.4-րդ հոդվածից հանել | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | հոդված (լրամշակված 5-րդ հոդված) | ինքնակարգավորվող կազմակերպության մարմինների վերաբերյալ դրույթները: | | |
| 12 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 5-րդ հոդված (լրամշակված 6-րդ հոդված) | Նախագծի 5-րդ հոդվածում առաջարկում ենք Կառավարության կողմից ընդունման ենթակա ակտերը մատնանշելիս «իրավական ակտ» արտահայտության փոխարեն օգտագործել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ» արտահայտությունը՝ ուղղորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված սահմանմամբ: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 13 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 5-րդ հոդված (լրամշակված 6-րդ հոդված) | Առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի մասերի համարակալումը և հղումները շտկել: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 14 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 5-րդ հոդված (լրամշակված 6-րդ հոդված) | Նախագծի 5-րդ հոդվածի, «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի նոյեմբերի 16-ի ՀՕ-431-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի, «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հոդվածի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»: | | |
| **««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի լրամշակված 2-րդ և 3-րդ հոդվածներ | Առաջարկում ենք «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում, 45-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել «չափագրում (հաշվառում)» ձևակերպման փոխարինում «չափագրում, հաշվառում» ձևակերպմամբ՝ պահպանելով «չափագրում» և «հաշվառում» գործընթացությունների միմյանցից անջատ դիտարկելու մոտեցումը: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| **«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ | «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող «Քաղաքաշինության մասին» օրենքի 11.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Քաղաքաշինության բնագավառում հավաստագրված մասնագետները մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող ֆիզիկական անձինք են, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են մասնագիտական գործունեության շարունակական մասնագիտական զարգացման համապատասխան հավաստագիր և գրանցվել են քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից վարվող՝ մասնագետների գրանցամատյանում (այսուհետ՝ հավաստագրված մասնագետ), բացառությամբ ինժեներական գեոդեզիական ծառայություններ մատուցող անձանց, որոնց որակավորման պահանջները սահմանվում են «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքով»: «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ հոդվածի համաձայն՝ «( ) հաստատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ նաև՝ ՇՄԶ) կազմակերպման և հավաստագրման հնգամյա ժամանակացույցը.»: Հետևելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին՝ առաջարկում ենք | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներում «շարունակական մասնագիտական զարգացման» ձևակերպման փոխարեն օգտագործել «ՇՄԶ» ձևակերպումը: | | |
| **ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1 | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 1-ին հոդված | «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք կատարվող հղումը հստակեցնել և նշել, թե «Պետական տուրքի մասին օրենքի 20-րդ հոդվածի որ մասում է նախաձեռնվում լրացում, քանզի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հղումները կատարվում են հստակ և ուղղակի: » | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| **«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ՀՕ-431-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** | | | | | |
| 1. | ՀՀ **կառավարություն** | Նախագծի 2-րդ հոդված | «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի նոյեմբերի 16-ի ՀՕ-431-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը առ այն՝ «( ) Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով ( ) »: | Ընդունվել է: | Ընդունվել է: |